**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-10/5-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **13.03.2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Մնացականյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **17.12.2019թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-10/5-2** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **6,914,768 (վեց միլիոն ինը հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **3.3** կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան **10.12.2020թ.**:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Նոր-Նորք, Քոչինյան 4 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1570027038800100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00170838 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Դ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/5-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ 2-րդ եռամսյակ |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Հատիչներ (եռաֆազ հատիչ 400Ա) | հատ | 15 | 40,193 | 602,895 | 15 |
| 12. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 100Ա) | հատ | 50 | 7,270 | 363,500 | 50 |
| 13. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 160Ա) | հատ | 70 | 8,591 | 601,370 | 70 |
| 14. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 250Ա) | հատ | 60 | 17,900 | 1,074,000 | 60 |
| 15. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 400Ա) | հատ | 20 | 49,500 | 990,000 | 20 |
| 16. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 630Ա) | հատ | 10 | 65992.8 | 659,928 | 10 |
| 27. | Միացուցիչներ և կոնտակտային տարրեր (էլեկտրական անջատիչ միաբևեռ, ներքին մոնտաժի) | հատ | 2,500 | 320 | 800,000 | 2,500 |
| 30. | Էլեկտրական վարդակ, միաբևեռ, ներքին մոնտաժի-հողանցումով | հատ | 3,500 | 342.85 | 1,199,975 | 3,500 |
| 31. | Էլեկտրական վարդակ, միաբևեռ, բաց մոնտաժի-հողանցումով | հատ | 1,500 | 323.4 | 485,100 | 1,500 |
| 38. | Լամպերի կոթառներ (էլեկտրական կոթառ հախճապակե) | հատ | 2,000 | 69 | 138,000 | 2,000 |

**Գնորդ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ
Ն. ՑՈՒՀՑՅԱՆ

**Վաճառող**
«ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ
տնօրեն
Դ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/5-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ. |
| 3. | Հատիչներ (եռաֆազ հատիչ 400Ա) | 44511150/511 | 602,895 | 602,895 | 602,895 | 602,895 | 602,895 | 602,895 | 602,895 | 602,895 | 602,895 | 602,895 |
| 12. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 100Ա) | 31211180/533 | 363,500 | 363,500 | 363,500 | 363,500 | 363,500 | 363,500 | 363,500 | 363,500 | 363,500 | 363,500 |
| 13. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 160Ա) | 31211180/534 | 601,370 | 601,370 | 601,370 | 601,370 | 601,370 | 601,370 | 601,370 | 601,370 | 601,370 | 601,370 |
| 14. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 250Ա) | 31211180/535 | 1,074,000 | 1,074,000 | 1,074,000 | 1,074,000 | 1,074,000 | 1,074,000 | 1,074,000 | 1,074,000 | 1,074,000 | 1,074,000 |
| 15. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 400Ա) | 31211180/536 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 |
| 16. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 630Ա) | 31211180/537 | 659,928 | 659,928 | 659,928 | 659,928 | 659,928 | 659,928 | 659,928 | 659,928 | 659,928 | 659,928 |
| 27. | Միացուցիչներ և կոնտակտային տարրեր (էլեկտրական անջատիչ միաբևեռ, ներքին մոնտաժի) | 31221190/511 | 800,000 | 800,000 | 800,000 | 800,000 | 800,000 | 800,000 | 800,000 | 800,000 | 800,000 | 800,000 |
| 30. | Էլեկտրական վարդակ, միաբևեռ, ներքին մոնտաժի-հողանցումով | 31588100/503 | 1,199,975 | 1,199,975 | 1,199,975 | 1,199,975 | 1,199,975 | 1,199,975 | 1,199,975 | 1,199,975 | 1,199,975 | 1,199,975 |
| 31. | Էլեկտրական վարդակ, միաբևեռ, բաց մոնտաժի-հողանցումով | 31588400/501 | 485,100 | 485,100 | 485,100 | 485,100 | 485,100 | 485,100 | 485,100 | 485,100 | 485,100 | 485,100 |
| 38. | Լամպերի կոթառներ (էլեկտրական կոթառ հախճապակե) | 31221180/505 | 138,000 | 138,000 | 138,000 | 138,000 | 138,000 | 138,000 | 138,000 | 138,000 | 138,000 | 138,000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Գնորդ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ
Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**Վաճառող**
«ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ
տնօրեն
Դ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ